

LE DANUBE

ՀԱՆՈՒՄ ԵՐԹՆՈՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 րուպլի թղթադրամ:

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 րուպլի թղթադրամ:

Փոստի ծախքը խմբագրությունը կը վճարէ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մանուցման տողը 50 սանթիմ է: Հայերէն Պուլկարե-րէն եւ ֆրանսերէն լեզուով:

Խմբագրությունը զրկուած համակ կամ գրութիւն ետ չ'որուիր:

Նամակ եւ ծրար պէտք է զրկել հետեւեալ հարցէով:

M. S. TUTUNDJIEFF

Rédacteur du journal "TANOUF"

(BULGARIE)

ROUSTCHOUK

ՎԱՌՈՒՄ

Այս քաղաք ուր Պուլկարիաի կարեւորագոյն նա-ւահանգիստն է Սև ծովու վրայ, կը պարունակէ 335 Հայ ընտանիք, որոց մօտ 300ը տեղացի են, իսկ մնացեալք ամենամեծ մասամբ վերջին 10-15 տարիների միջոցին թուրքիայէն աստ գաղթած և գործով հաստատուած են:

Վառնայի Հայեր ունին մէկ եկեղեցի քարաշէն Ս. Մարգիւս անունով, որ աղքատ է թանկագին անօթներու, զգեստներու և զարդերու մասին, ինչպէս կը գտնուին քիչ թէ շատ ուրիշ եկեղեցիներու մէջ:

Մեր քահանայներ, Արժ. Հայրերն Տէր Մարտիրոս Մարտիրոսեան և Տէր Յովհան Մանգուկունի (Շումլացի) իրենց կոչման համապատասխան բարք ու վարքի աէր են և ժողովրդի համարումն գը-րաւած. շնորհիւ իրենց ջանքերի և խնամօք Մեծ. Տիար Մարտիրոս փափազեանի, որուն յանձնուած է թաղ. խորհրդի կազմէ եկեղեցւոյ պէտքերուն հոգատարութիւնը, եկեղեցական բարեկարգութիւն և պայծառութիւն, ինչպէս և շէնքին ու կահերուն մաքրութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ են. և շատ փափաքերի է որ այս վիճակ շարունակէ ցմիշտ:

Եկեղեցին ունէր մէկ փռւ և երկու խանութ,

որք 2000-2400 լէվ տարեկան հասոյթ կը բերէ-ին. այս կալուածներ քաղաքի յատակագծին (plan) պահանջման համաձայն փրցուեցան քաղաքապետութեան անօթներով եւ, որ գետններուն մօտաւոր արժէքը վճարեց ազգին ասկէ մէկ տա-րի յառաջ փրած շէնքերուն տառաջին մեծ մասը ծախուած է:

Թաղ. խորհուրդն մտադիւ էր անցեալ տարի նորոգ կառուցանել իգական սեռի վարժարան մը եկեղեցւոյ բակին մէջ, որ բաւական ընդարձակ է. ամեն նախապատրաստութիւն եղած էր և շէնքին հիմերն իսկ սկսան փորուիլ, երբ յանկարձ գրա-ցիներու տուած մէկ խնդրագրին վրայ, քաղաքի յատակագծին պահանջմանց վերաբերեալ դժուա-րութիւններ և անհամաձայնութիւն ծագելով թաղ. խորհրդի և քաղաքապետութեան միջև, սա գաղ-րեցուց սկսուած չինութիւնը և խնդիրը տեղեկագրեց ՚ի Սօֆիա, այն տեղէն հրահանգ խնդրելու համար, այս պատճառաւ չինութեան ժամանակը ուշացու և կա-ռուցումն մնաց յառաջիկայ ամառ եղանակին: Յատակագծական դժուարութիւններն այժմ բար-ձուած լինելով, թաղական խորհուրդը, ինչպէս կը լսեմք, որոշած է մօտ ժամանակ սկսիլ վարժա-րանի կառուցումն, որոյ աւարտումէն յետոյ փրած կալուածներու տեղ նորեր պիտի չինուին ազնիկ-

ներու վարժարանին այժմեան չէնքին (որ հին տուն մ'ըլլարով պիտի փլցուի) և պարտեզին տեղը:

Վառնա ունի երկսեռ վարժարաններ, աղջիկներունը Հռիփսիմեան՝ և մանչերունը Սիսակեան անունով, որոց հասոյթ յատկացուած են եկեղեցիէն օգնութիւն՝ 2000 լէվ, ժողովրդի վրայ ձեռնած տուրք՝ 3200 լէվ, թատերական ներկայացումներէ և աղջիկներու ձեռագործի վիճակահանութենէ, նուէրներէ ևն 1500 լէվ մօտաւորապէս:

1890ին ժողովրդի քուէով ընտրեալ հոգաբարձութիւնը գործելու համար իր տուէ և մեծամեծ դժուարութիւններ տեսնելով և թաղ խորհուրդը, որոյ օգնութիւնը անհրաժեշտ պայման մ'էր դրպրոցների գոյութեան, կազմալուծեալ ըլլալով, դրպրոցական տարիին սկիզբն այսինքն Սեպ. Աին իգական սեռի վարժարանը չբացուեցաւ, իսկ արական սեռինը բացուեցաւ, սակայն ոչ-կանոնաւոր վիճակի մէջ. վերջապէս Պուլկարիաի այցելու Հովիւ Գեր. Երէցեան աստ ժամանեց և յաջողեցաւ առժամանակեայ թաղ խորհուրդ մը կազմելու և ընտրեալ հոգաբարձութիւնը գործունէութեան մը մղելու և այսպէս անցեալ տարի Յունուսի 8ին օրինաւոր կերպով սկսան Սիսակեան վարժարանի դաստիարակութիւնները, մինչ Հռիփսիմեանի վերաբացումը յարմար չէնքի մը չգոյութեան և այլ դժուարութիւնների պատճառաւ քնաց անցեալ տարիի Սեպտեմբերին:

Երկու վարժարանների ուսումնական վիճակին վրայ թերեւս առիթ ունենամ ուրիշ անգամ մանրամասն գրելու, ցոյց տալով նոյա լաւ և թերի կողմերն. առ այժմ միայն այսչափ ըսել բաւ կը սեպեմ թէ դասերի մեծ մասը կ'աւանդուին բոլորովին նոր եղանակներով. մանաւանդ ընտելարանի փոքր մանուկները և նախակրթարանի ստորին կարգերը կ'ուսանին գիւրին եւ հրահանգիչ կերպով, աւելի վարժապետի բացատրութիւններէն քան դասագրքերէն. օրինակ, այժմ մեր տղայոց ձեռք բնաւ քերական չի տրուիր, այլ վարժապետը սե տախտակի վրայ գրելով և գրել տալով կ'ուսուցանէ տառ, վանկ, բառ կարգալ և գրել:

Ուսմանց ծրագիրը հոգաբարձութիւնը պատրաստած է գործակցութեամբ Տնօրէն-Դասատուին՝ նախապէս ձեռնհաս անձերի հետ այս մասին կատարուած խորհրդակցութեան մը հիմին վրայ: Ծրագիրը կը պարունակէ հետեւեալ ուսումները. Կրօն, Հայերէն, Ֆռանսերէն և Պուլկարերէն լեզուներ, ազգ. պատմութիւն, թուաբանութիւն, աշ-

խարհագրութիւն, բնագիտական տարրեր, վերջին տարին նաև տօմարակալութիւն և վաճառականական գիտելիք:

Ուսուցչական մարմինը կը կազմեն Տեաք.

1. Յ. Կ. Պօնճուքեան, Տնօրէն-Դասատու. որ պատասխանատու է ծրագրի և կանոնագրի գործադրութեան երկսեռ վարժարանների մէջ և կը ըստանայ 150 լէվ ամսաթոշակ. ուսած է Նուպար-Շահնազարեան վարժարանի մէջ և 'ի Գերմանիա:
2. Սիրաք Մարգարեան, վկայեալ Պօլսի Ուսումնական խորհրդէն. ամսաթոշակ 80 լէվ:
3. Ռուբէն Համբարձումեան, Վառնայի ազգ. դրպրոցին մէջ ուսած. ամսաթոշակ 60 ֆրանք. ունի նաև ըստարարի պաշտօն:
4. Գէորգ Ղարիպեան, նոյնպէս տեղիս դպրոցի մէջ ուսած, նոյն ամսաթոշակով. ունի նաև եկեղեցիի դպրապետի պաշտօն:

Հռիփսիմեան վարժարանի մէջ Տնօրէնէն զատ կը դասախօսեն՝

5. Օր. Մարիամ Փոքրաւորեան, այս քաղաքի մէջ ուսած. ամսաթոշակ 30 լէվ:
6. Օր. Վէրօն Մանուկեան, այստեղ ուսում առած. թոշակ 40 լէվ:
7. Օր. Տիգրանուհի Աղամեան, օգնական-հսկող, թոշակ 20 լէվ:

Բացի ասոնցմէ Արժ. Տէր Յովհան քահանայ Մանդակունի իբր այցելու դասախօս Սիսակեան վարժարանի մէջ օրը 2 ժամ կ'աւանդէ Հայերէն և Կրօն՝ 50 լէվ ամսականով:

Վերև նշանակեալ ուսմանց շարքին մէջ մուցայ յիշատակելու որ տօմարակալութիւն և ֆռանսերէն աղջիկներու ուսման ծրագրէն դուրս ձեռնած են, և թէ սօքա կ'ուսանին նաև ձեռագործ, իսկ Պուլկարերէն պիտի սկսին յառաջիկայ դպրոցական տարիի սկիզբը:

Աշակերտներու թիւն է 115, նոյնքան նաև աշակերտուհիներին:

Տեղիս երկրորդական վարժարանը (կիմնագիտ) կը յաճախեն 13 Հայ պատանիներ. իրենցմէ մէկը Ա. կարգին մէջ է, 2ը Բ. կարգին, 5ը Գ. կարգին, և 5ը Ե. կարգին մէջ են:

Վառնայի առևտրական հրապարակին վրայ առաջին տեղը կը բռնեն Հայ վաճառականներն, որք բնիկ Պօլսեցի կամ Կեսարացի են երկուքէն զատ, որոց մին Իզմիրցի է, իսկ երկրորդը Ռուսճուզցի ունիմք նաև եօթն պաշտօնեայներ, հեռագրատան կամ կառավարչի պաշտօնատան մէջ գործող Մին քաղաքապետութեան երկրաչափ է:

Բացի վերը նշանակեալ Հայ ընտանիքներէն, կան նաև այստեղ ամուրի կամ իրենց ընտանիքները ձգելով աստ եկող պանդուխտ Հայեր, որոց մեծագոյն մասը կը կազմեն Վանցի և Մշեցի բեռնակիրներն. սոցա թիւը 60ի կը հասնի իմ առած տեղեկութեանց համաձայն. իրենցմէ 45ը կը գործեն մաքսատան մէջ, մնացեալք վաճառականաց քով կը ծառայեն: Առանց ընտանիքի ապրող մը նացեալ պանդուխտներու ճիշտ թիւը իմանայ կարելի չեղաւ. ինձ, հաւանականաբար 20 տեղի են նոքա:

Վառնա չունի այժմ ազգ. ոչ մի բնկերութիւն. ասկէ յաւաջ թէև հաստատուել են ընկերութիւններ, սակայն ազա կազմալուծուել են, ինչպէս կը պատահի մեր ազգի մէջ հիմնեալ բնկերութեանց մեծ մասին:

ՎԱՌՆԱ. 24 Փետր. 1892

ԲՈՐՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ

ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՆ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ

Կարդալով «Դանուբ»ի Յրդ թւոյն մէջ հրատարակուած մի թղթակցութիւն կ'Պօլսէ ուղղուած Դեկտ. 10 թուականաւ որ ցաւած սրտով բացատրելով Հայ բարեգործական կազմակերպութիւններէ և վարժարաններէ փիճակն Ասիական հոգերի մէջ. լինի 'ի Հայաստան կամ յայլուր, դպրոցներէ մօտակայ փակուամեր կը գուշակէր. աւելորդ կը լինի մտածել որ այս խնդիր որքանի՞ կենսական կէտի մի շուրջ կը դառնայ և որ քանի պէտք ունի ամենաբարձր ուշադրութեան առնուելու:

Մինչդեռ եւրոպացի ազգեր կը ընուն իրենց աշխարհներ վարժարաններով և չբաւականանալով այսու կը յառաջին մինչ Արեւելք կանգնելով իւրեանց դպրոցներ իրենց ազգութիւն համակրելի դարձնելու և օտար ազգութիւններ առ ինքեանս ձգելու համար և ամա հակառակ երբ մենք պատճառ կը լինինք մեր աշխարհին մէջ գտնուած հազուադիւր վարժարաններ փակուելուն կրկնութիւն կը լինի ասել ծիծաղելի միայն կը դառնանք:

Հայ վարժարաններն մեր մանուկներէ ապագայն այդպիսի խախտութիւններէ մէջ տեսնել, մեր ապագային վրայ դրած յոյսեր առ ոչինչ գրել կը նշանակէ, նկատառութեան կը կարօտի մանաւանդ այդ խախտութիւն փիճակ այնպիսի հոգերի վրայ գոյու-

թիւն ունի, ուր աւելի քան երբէք լոյսի պակասութիւն կայ. ուր ուսմունք և գիտութիւն բնական չեն տիրեր, ուր ժողովուրդը առաջին և վերջին աղբիւր իմաստութեան Նաբէլը կ'ընդունի, ուր Սալմա Ստոլաւադարանութիւն և թէ առանց բացատրութեան կարօտելու, և առանց թերահաւատութիւն ընդունելու մէջ հաշտելու անբռնելի, եզական զօրութիւններէ շտեմարան կը կարծուի, և այսպիսի խարխալների վրայ հաստատուած չէնքեր կը մարին բնականապէս, եթէ ժամանակների սահելուն հետ միասին չ'փոխեն իրենց դիրք, եթէ օրէ օր չ'ճոխանան, չ'յառաջդիմեն միօրինակ վարժարանական ծրագիրներով: Սերունդներ կը յաջորդեն իրարի, սոցայն հայրէն տգիտութիւն կը ժառանգէ և փոխադարձաբար կը կտակէ զայն իւր զաւակին:

Ո՞վ է պատճառ մեր գիւղական վարժարանների այդ ցաւալի դրութեան. — պատճառ, զայն վարող մարմիններն ե՞ն պատճառ, նորա պաշտօնեայնրն ե՞ն. պատճառ տեղական ժողովուրդն է որոց ձեռք կը մնայ միշտ արժանն անօրինելու ամենամեծ ոյժը:

Այս կարծանիչ տարբերի հանդէպ եթէ մի անձնուէր ոք չ'ծնի, մի զգայուն անհատ մէջտեղ չը կայ, անմիջապէս կը հետեի մի բոլորովին մութ երկինք, ուր արեւ չ'ծագիր թանձր աղջամուղջի պատճառաւ: Այդ վայրէ իսպառ կը ջնջուի գրիչ, թուղթ, մեքան և ծանր մի տգիտութիւն կը թրմբեցնէ ամեն միտք, գոյելով յառաջագիմութեան և լուսաւորութեան յուսատու գոներն նոցա տաւաջ որ կ'ապրին այդ տեղ:

Այս է ընդհանուր սիրող կացութիւնն գաւառների մէջ, շատ ցաւալի է նկատել որ այդ տեղեր ամեն կրթական ազգօգուտ ձեռնարկութիւն կործանուած կը բուրէ, զանց առնելով մի քանիններն. ամեն հաստատութիւն բարել մի կը ներկայացնէ. եթէ անդ խղճմտութեամբ աշխատի վարիչ մարմինն, կը տեսնես պաշտօնեայնր կը գործեն 'ի վրնաս միմեանց. եթէ պաշտօնեայնր իրենց պարտականութիւն ճանչին ժողովուրդը անվատահոթութիւն կը տածէ նոցա նկատմամբ, մերթ գասատունների ձեւեր անմարսելի կը թուին իրեն, մերթ դպրոցական ծրագիրներ այլանդակ կը պատկերուին նա և իւր աւանդական գիրքերէն տարագրուին տեսնելով սոսկական կերպով դպրոցի սեմէն կը կարծէ թէ անաստուածութիւն կը քարոզուի, համոզական խօսքեր նրա համար աննշան կ'երևին, չ'կրնար ըմբռնել թէ իւր պաշտած գիր-

քեր տղայի մի ուղեղին վրայ ու է բարեբար աղ-
դեցութիւն յառաջ չեն կարող բերել, թէ խրթին
են, հոն կը ծնի մի հակառակութիւն, հաւատարա-
պէս չենք կարող առել թէ ամեն ծնող այս ար-
տառոց գաղափարները կեդրոն կը գտնայ, կը
գտնուի յաճախակի մի ուրախացողիչ բացօռու-
թիւն, որ առաւել զօրաւոր փաստերով զինուած
կը կանգնի առաջինին դէմ, երկուքն ալ նոյնու-
թեամբ ունին իրենց կուսակիցներ, անմիա խա-
ւարեալներ որոնք արեւի գոյութիւնն կ'ուզեն կառ-
կածի տակ ձգել, որոնք չեն ամաչէր ուրանալ
ճշմարտութիւնն: Դպրոցեան և հակադպրոցեան
(կը ներու՞ին մեզ արգեօք այս բառեր) երկու
կուսակցութիւններ կը կազմուին յանկարծակի,
մաքառումն ն ին խօսքով է և սկսած շատ պարզ
դոյների տակ, խօսքեր յորդառատ աղբիւրի պէս
կը ցայտեն դպրոցեանի բերնէն և նա կը տանի
իւր յաղթանակ բարկութեան, ցասումի կրակը
նետելով իւր հակառակորդի սրտին մէջ իւրեանց
սուրբ կարծած և պաշտօնած խնդիր հայհոյու-
թիւնների կ'ենթարկի: — աւելի կը լինի մասածել
որ չափազանցութիւնն միշտ խաւարամիտէն պատ-
կանուած է, — խօսքերէն ապտակ, ապտակէն
փայտ, և ի մի բան ասոնցմէ կը ծնին մի ահեղ
չփոթութիւն, թշուառ մանկիկներ կը առնեն յա-
րաժամ այդ չփոթութիւնների առիթով, փարժա-
րանն ոչ նոր և ոչ հին ծրագրին կը հետեւի, կը
գոցուին նորա դռներ և գիւղին փողոցներ կը լեց-
ուին անմեղ մանուկներով, ապագային այդ դըպ-
րոցների փակուելուն պատճառ դարձող տղէտնե-
րի տեղը լեցնելու համար:

Այսպիսի կարեւոր խնդիրների մէջ որքան մեծ
դեր կը կատարեն տեղւոյն առաջնորդներ, նորա
կրնան հաշտարար ոյժ լինել և լուսաւորեալ դա-
սակարգի գաղափարներին մօտեցնել խաւարա-
միտներն եթէ երբէք իրենք ևս զարկ չ'ընեն ու-
սումի լոյսին, եթէ օրինաւոր կրթութեան և դի-
տութեան մէջ կրօնական սկզբունքների դէմ տար-
բեր չ'ենկատեն, կրկնակի կը սաստկանայ գաւառնե-
րի վիճակ երբ հոն կը կենան խաւարամիտ առաջ-
նորդներ, այսպէս կը կորսնցունեն բազմաթիւ գիւ-
ղեր, իւրեանց քիչ շատ բարեկարգ վարժարաններ
և շատ անգամ ալ կը յաջողին նոյա տեղ կանգ-
նել նախկին ողբալի վիճակի մէջ գտնուող դըպ-
րոցներն, ուր Սոլթմանի ջերմ պաշտպան և նորա պա-
րունակութիւնն ըմբռնելու անկարող ոք, մի ար-
գէտ ռիթմ կը սկսի դասախօսութիւնն կարծեցեալ

մեծ ոգևորութեամբ և ահա ժողովուրդը գոհ է,
նորա խռով ճակատ հանդարտած է զի անասու-
ուած տատանայներին արտաքսած է իւր մէջէն:

Մեր այս տոյքը երեւակայութեան արդիւնք չեն
և ոչ ալ նկարագիր կեղծ պատկերների, արա
պատճառը համեմատութեան պակասութիւնն է:

Գ. ԱՐՄԱՆԵԱՆ

18 ՓԵՏՐ. 1892

ՏՐԱՊԻԶՈՆ

ԳԵՐ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ

ՄԱՍԻՆ

Ահա առիդ այսօր վերջնականապէս կուգամք
պարզել մեր համոզումը Գեր. Խորէն Արքեպիս-
կոպոս Լուսինեանի խնդրոյ նկատմամբ, յայտնելով
մեր ազնիւ ընթերցողաց որ մեր սոյն համոզմանց
հիմն եղած են Պօլէն մեր ստացած բազմաթիւ
թղթակցութիւններ, այնպիսի անձնաւորութիւննե-
րէ մեզ հաղորդուած որք ոչ թէ ու է մի թեր-
թի, վճարեալ թղթակցի նման բան մը գրած ըլ-
լալու համար թղթեր մրոտած են հեռուէն և մօ-
տէն լրածնին թղթին աւանդելով, այլ նոյն իսկ
այս խնդրոյ տարրական պարագայներուն անգամ
վերահասու և ականատես ըլլալէ յետոյ վերապա-
հութեամբ մեզ հաղորդած են իրենց նամակներն:

Խորէն Արքեպիս իր ԼՈՒՍԻՆԵԱՆ մականունն հա-
մար ն. Կ. Վ. Սուլթանի հրամանաւ գաղտնի ու-
տիկանական հսկողութեան առարկայ էր, որովհե-
տե նորին Սրբազնութեան ռեբիւսք «ԼՈՒՍԻՆԵԱՆ»
անունը չարժաւիթ ընելով կասկածելի ցոյց տուած
էին յաջա ն. Կ. Վ. Սուլթանի և նորին Սրբազ-
նութեան արգելք դրուեցաւ բնաւ չի թղթակցիլ
իր իշխան եղբոր և նրա որդւոյն Լեւոն Պէյի հետ,
նորին Սրբազնութիւնը բաւական ատեն յարգած
էր այս բարձրագոյն արգելքը, այլ ի վերջոյ խոր-
հելով որ ինքը որ և է քաղաքական կամ ազգա-
յին խնդրոյ նման նիւթերու վրայ մի թղթակցու-
թիւն չ'ունի իր եղբոր հետ, այլ լոկ ընտանեկան
և եղբայրական մի նամակ է իր գրելիքն, և աղ-
կէ ալ բնաւ իրեն մի վնաս յառաջ չի գար, ուս-
տի վերջին անգամ իր եղբոր որդւոյն մի նամակ
կը գրէ և կը յանձնէ Ֆրանսական թղթատարի
լրատեք իր մի մեծ քաջագործութիւն արած կը
ձերբակալեն նամակը և կը յանձնեն ոստիկանու-
թեան նախարարին գիշեր ու ցորեկ քննութիւնք

որոշ մի յանձանք չեն կարող գոյացնել իր մասին, բայց ի այն թեթև յանձանքէն որ կը բաղկանար լոկ թղթակցութեան արգելքին չանտան. և այդչափ թեթև յանձանքի մը համար էր միայն, որ արժանայաւ Ն. Կ. Վ. Սուլթանի ներման. իսկ Աշըղեան՝ ինչպէս որ մեր նախորդ յօդուածներով ըսած ենք իր ներքին բաղձանքը իրագործելու համար անդթօրէն պաշտօնագրերի ըրաւ Նորին Սրբազնութիւնը. իսկ դաւով այն լուրերը թէ իբր թէ Լուսինեան Սրբազանի փոխակար թղթակցութիւնները բռնուել են խռատփանաղիւր ստորագրած ըլլալը և՛. այնքան այլանդակ ստուծիւններ են զորս հաւատարմ սղոյաւմութենէ անդին չանցնիր. և մենք կը փութամք յայտնել թէ հարկ չի կայ հաւատարմ այդ խեղադիւրեայ լուրերուն զի եթէ Խորէն Սրբազան յանձնուր լինէր անկարելի էր որ Ն. Կ. Վ. Սուլթանի ներմանն արժանանայ. իսկ ցաւելով կը տեղեկացնեմք մեր ազնիւ ընթերցողներին որ Նորին Սրբազնութիւնը շատ տկարայել է այս զրպարտութեան դէպքէն, ինչպէս նաև մեր աւերիչ ազգ. Պատրիարքարանի իր մասին բռնած հակազդային և հակաքրիստոնէական դիրքէն. անշուշտ Աշըղեան Սրբազան զղջացած է իւր ըրածին, այլ եղածն եղած է. արդէն իր որ ձեռնարկին մէջ չի զղջաց Աշըղեան որ այս գործին մէջ գոհ մնար:

ՏԵՂԱԿԱՆ

Ռուսճուզի և չրջակայ գիւղաքաղաքների վարժարանաց ընդհանուր տեսուչ պ. Ն. Ժիվլբով, 6 Մարտ և 167 թուահամարաւ ամեն ազգաց վարժարանների ուսուցչաց և ուսուցչուհեաց հետեւեալ պաշտօնական չրջաբերականը խրկած է, ըստ նոր կանոնագրի, որ ստացած է Պուլկարական կրթական նախարարութենէ 12 Փետր. 92, 1161 թուահամարաւ. որով կը պահանջուի հետեւեալ տեղեկութիւնները իւրաքանչիւր ուսուցիչներէ և վարժուհիներէ, ներկայացնել անյապաղ տեսչութեան:

1. Անուն և մականուն:
2. Ուր տեղ կը վարէ իւր ուսուցչական պաշտօնը, քաղաքի կամ գիւղի մէջ:
3. Ուր կարգի վարժարանի մէջ կը դասախօսէ, ուսումնարանի՞ թէ նախակրթարանի:
4. Ծննդավայրը. քաղաքի՞ թէ գիւղի մէջ ծնած է:
5. Ուր տէրութեան հպատակ է, եթէ ուրիշ տե-

րութեան մը հպատակ է եղած. երբ ընդունած է Պուլկարական հպատակութիւնը:

5. Ուսումը ո՞ր տեղ առած է, և ո՞ր թուականին չրջանաւարտ գուրս եկած է վարժարանէն. նշանակել նաև ուսումնարանի՞ թէ նախակրթարանի, ազգայի՞ն թէ մասնաւոր վարժարանի մէջ աշակերտած է:

7. Եթէ ուսուցիչ մը համալսարանէ մը չրջանաւարտ է գուրս եկած պարտի նշանակել թէ ո՞ր ճիւղը ուսումնասիրած է. իրաւաբանական, փիլիսոփայական, թէ Առտուածաբանական:

8. Ուսուցիչը ինչ շքանշան ունի. վարժարանական և կամ զինուորական, և ինչ առթիւ է ստացած:

9. Ուսուցիչ մը պարտի նշանակել նաև թէ ո՞ր վարժարանաց մէջ պաշտօն է վարած. Պուլկ. Թրք. Իսրայէլեան ևն, բարձրագոյն թէ նախակրթարանի, և որչափ տարի:

10. Պարտի նշանակել մանրամասնօրէն. մասնաւոր պաշտօններ կատարած է. և կամ վարժարանաց տեսչի կողմանէ քննչի պաշտօն կատարելու կոչուած է թէ ոչ:

11. Ուրիշ պաշտօններ կատարած է. և ինչ պաշտօն, այս առթիւ պարտի ներկայացնել վկայականներ, ուսուցիչ մը դարձեալ պէտք է ներկայացնէ փաւերական թղթեր զինուորագրութենէ ազատ լինելուն և կամ ծառայած լինելուն համար:

Բացի վերոգրեալ տեղեկութիւններէ նախարարութիւնը կը պահանջէ տեսուչներէ որ սոյն տեղեկութիւնները ստանալէ վերջ իր կողմանէ ևս աւելցուի և կարծիքները յայտնէ իւրաքանչիւր ուսուցչի և ուսուցչուհեայ արժանիքը, բարոյականը և գործունէութիւնը իւր պաշտօնավարութեան ժամանակ:

Իւրաքանչիւր կրթական մարմին պարտին չրջաբերականը ստանալէ 10 օր վերջ սոյն տեղեկութիւնները ներկայացնեն անյապաղ:

Ծանօթ. վերոգրեալ տեղեկութիւնք պէտք է նշանակուին առանձին տողերով, ինչպէս որ նշանակուած է վերը. և անունները պէտք է գրուին ամբողջութեամբ, օրինակի համար, եթէ ուսուցչի անունը վահան Արամեան է, պարտի գրել նոյնպէս փոխարէն Վ. Արամեան գրելու:

Պ. Տեսուչը շեշտելով իւր չրջաբերականի պարտականութիւնը կ'աւելցնէ նաև. «ովոր չի կատարէ ժամանակին իրմէ պահանջուած տեղեկութիւնները տալ նոքա պիտի համարուին ծղլ և դանդաղ»:

Դամբարան

Ի՞նչ է դամբարանն. գիտե՞ք ընկերներ?
Վի՛ն մի ցրտաշունչ կամ փոս զգալի
Ուր տարաբաղ շարունակ անկեմ, անկեմ,
Կեանքէն յոգնաբեկ հանդարտ կը հալի:

Թող շատ չը սիգան հարսնասուն ու իր գանձ,
Թող շատ չ'արտասուռն թշուառն մոռացիկ,
Զի հոս ամեն բան կը սահի փաղանց.
Ու կը ժառանգէ դամբարանն ստորոցիկ:

Դամբարան ստորոցիկ, ի՞նչ բառ տեղեկի
Անոնց որ սիրեն հաճոյք եւ հրճուանք,
Եւ ունին ժամեր, պարեր հեղտալի
Ան միթէ անոնք կ'ոգնեն թողոյ՜ կեանք!
Դամբարան ստորոցիկ, ի՞նչ բառ երկնային
Աղքատին որոն ցորեկէն է ամպոտ
Եւ կը սառնայի վիշտով հոգիին
Զորիկ սփռփսկէն ու սիրտէ գթոտ:

Հարուստ մի՛ հրճուիր, աղքատ մի՛ ողբար,
Կը հասնի ատենն մեկնելու ասիկ
Եւ դուք իրար ձեռք տռած հեղաքար
Կ'իջնէք դամբարան անթօս, խորհրդից:
Կեանքն երբ կը հալի աշխարհիս փրան,
Հարուստն ու աղքատ, ժպիտն ու սքստոս
Զուր ձեռքի տռած կ'իջնեն դամբարան,
Ո՛հ! ուրեմն ի՞նչ են փառքերն սրտմաշոք:

ԱՍՈՂԻԿ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՉԱԿՆՔԵԼՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

(Եւրոպական 12րդ դարի վերջ)

Երբ Հայր Պիկուանի ծանուցին սոյն պոչումը, կար-
ծեց թէ զինքը կը խաբէին, այնչա՛փ իրեն արտասովոր
երեւցաւ:

— Ինչ՞պէս ըսիք, հարցուց՝ գիտե՞լով հաստատապէս
ատենանին անդամները:

— Կրակէք թէ, Հայր Պիկուան, պատասխանեցին ան-
գամք, ատենանը որոշած է որ որդւոյդ սպաննիչը ձեռքդ
տրուի եւ դու ալ ուղղա՛ծիդ պէս պատմես:

— Իրա՛ւ կ'ըսէք, հարցուց Հայր Պիկուան:

— Այո՛ իրաւ է, բայց ատենանին անգամք:

— Սպաննիչն երբ պիտի տաք ձեռքս, գոչեց Հայր
Պիկուան:

— Այժմ իսկ, պատասխանեցին անգամք:

— Ուրեմն, ըսաւ Հայր Պիկուան՝ քիչ մը ատենէն գո-
հանալ ուղղով կատարութեան չեշտով մը, Ատոռած ողոր-
մի հողւոյն... ատէ՛ք ինձ հրացան մը եւ փորեցէք
փոս մը:

Հանրապետական զինւորը, ձեռքերը ետին կապած,
Բենիամինի հօր ձեռքն յանձնեցին եւ նա դարձեալ հար-
ցաքննել սկսաւ:

— Թշուառական, ինչո՛ւ սպաննեցիր զաւակս:

— Ատենանին առջեւ ըսի, կարծեցի թէ զիս սպաննել
կուզէր:

— Բայց զաւակիս ձեռքը իբր զէնք ցուպ մը կար:

— Զէի գիտեր, հարկւր քայլ անդին ցուպն հրազէն
կարծեցի:

— Եղբայր, քոյր ունի՞ս:

— Ո՛չ, միակ եմ:

— Հայրդ ողջ է:

— Այո՛, բայց շատ ծեր է:

— Ինչ աւելի ծեր է:

— Հասակակից է քեզ:

— Զքե՞զ ունի միայն զաւակ:

— Այո՛:

— Եղբայր, քոյր, եղբորորդի, ընտանիք ունի՞:

— Ոչ, առանձին է, աշխարհի մէջ միայնակ:

— Ուրեմն, երբ մեռնիս, աշխարհի մէջ ուրիշ նեցուկ
չունի՞:

— Ո՛չ:

Սոյն վերջին պատասխանին վերայ, Հայր Պիկուան
գլուխը ծռեց, եւ ցած ձայնիւ արտասանեց վշտագին
«աւա՛ղ, բոլորովին ինձ պէս է եղեր»:

Յետոյ որդւոյն յիշատակն իսկ եւ իսկ արծարծելով
յինքն, շտիկեցաւ, աչքեր հրացանի մը կայծակնահար
ձայնով կը գոչեց:

— Մարգարտապա՛ն պատրաստու՛ է ի մա՛ն:

Սոյն խօսակցութեան ատեն քիչ մը անդին փոս մը
փորուած էր, Հայր Պիկուան անգոր տարաւ իւր կալա-
նաւորը, կանգնեցուց ա՛յն փոսին քով որ իրեն չիբիմ
պիտի լինէր, յետոյ իրեն տրուած հրացանի մը մէջ վա-
ռօղ եւ երկու գնդակ դրաւ:

Զինուորն ընդմիջեց ծերունւոյն այն զբաղմունքը:

— Զենէշնորհ մը կը խնդրեմ ըսաւ:

— Ինչ չնորհ:

— Թեւերուս կապը քակուի եւ մեռնիմ ազատ իբր
'ի դաշտի պատերազմի:

— Կը փախչիս:

— Թիզ մ'ալ անդին չեմ երթար, կերգնում:

Հայր Պիկուանի մէկ նշանին վերայ նորաւոր զինւորին
ձեռքերը քակեցին. նայեցաւ թեւերուն վերայ չուանին
թողած հետքերուն եւ ջանաց ջնջել զայն. յետոյ աջ
ոտքն յառաջ տանելով գունատ բայց հանդարտ երեսը
բարձրացուց եւ մահուան սպասեց:

Հայր Պիկուան հրացանը լեցուց, աջ ուսին դէմ վեր-
ցուց եւ հանրապետական զինւորին ուղղելով խուլ ձայ-
նով մը գոչեց:

— Պատրա՛ստ ես:

— Ծնո՛րհ, ըսաւ զինւորը, միայն վայրկեան մը:

Յետոյ ջնամոռանդաբար ձեռքը ձակտին տանելով
խաւճիկէն:

Հաւատոյ եւ Կրօնի սոյն գործողութիւնը սարսեցոյց
ծեր ազարակատէրն, իբր թէ փայլուն փայլակ մը եւ

սաստիկ որոտմունք մը զարկած լինէին աչքերն, ականջներն եւ հոգին, զէնքը ձեռքէն ինկաւ:

Ո՛հ, ո՛հ, գոչեց հրացանն ետ մղելով, եւ իբր ներշնչեալ Քրիստոնէական ներողութեան Հրեշտակէն, չ'պիտի անշնչացնեմ արարած մը որ աշխարհիս փրկութեան Սրբազան նշանն իւր վրայ կը ցուցնէ: Հանրապետական զինուոր, իմ Կրօնքս կ'արձակէ զքեզ ինձ դէմ գործած ոճրէզ:

Յետոյ, սոյն խօսքերն հաստատելու համար, վերցուց հրացանն եւ օդին մէջ պարպեց:

Ձինւորն, որ աչքերը դոցած՝ ներքին ամփոփմամբ կը սպասէր մահ բնդունելու, տարաբարդ բեկումնի պէս ինկաւ իբր թէ ճշմարտապէս զարնուած լինէր, սոյն զարհուրելի եւ վեհմ տեսարանին վկայք վազեցին զինւորին քով եւ տեսան թէ երեսին վրայ եւ թեւերը տարածեալ ինկած ատեն փուշի մը միջոցաւ երակ մը բացուած եւ արիւն կը վազէր:

Շնորհիւ սոյն դեպքին, հանրապետականն խելքը շուտով զուլին եկաւ, երբ բոլորովին սթափեցաւ, Հայր Պիկուան մօտեցաւ նմո եւ ըսաւ.

— Երիտասարդ, ազօթք քրէ՛ մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի որ խաչին վերայ մեռաւ, վասն զի նա է որ քու կեանքդ ազատեց: Գերագոյն վայրկեանին քո երեսիդ վրայ ըրած նշանդ յիշեցոյց ինձ որ Քրիստոնէայ եմ եւ փարատեց ինձ ռիսակալութեան խորհուրդ մը որ արդարեւ եկած էր ինձ չար ոգիէ, վասն զի այն չար ոգին է որ վայրկեան մը ինձ ազդեց ծերունի մը զրկել իւր միակ որդիէն եւ բնել զնա լքեալ եւ թշուառ, ինչպէս ես պիտի լինիմ: Ազօթէ Աստուծոյ՝ ա՛յն խեղճ աղուն համար որ եղաւ զո՛հ առաւել ճակատագրին քան քո անգթութեան:

Երբէք մի՛ մոռնար թէ նորա ծերունի հայրը զոհած է քեզի իւր ոխն, եւ սոյն ոխը պիտի լինէր սպաննութիւն մը գործելու պատճառ, երբէք մի՛ մոռնար թէ յանկարծ չ'նորձքով լուսաւորեալ մեր Աստուածային տիրոջ սոյն խօսքերը յիշած է թէ «մի սպանաներ»: Բոլոր կենացդ մէջ յիշէ, խաչակնքելու զօրութիւնը, սոյն նշանաւ է որ յաղթած ես հօր մը ռիսակալութեան:

Նորատի գինւորն սոյն խօսքերէն զգածեալ, ծերունոյն ծնգացր փարեցաւ, խաչակնքեց, եւ թողութիւն խնդրեց այն մեծ ցաւոյ համար զորս պատճառած էր իւր ճերմակ մազերուն, եւ հետեւեալ առաւօտուն մեմնեցաւ ողջ առողջ:

Հայր Պիկուան վեց ամիս վերջը մեռաւ. աւելի վշտէ քան ծերութենէ:

Երբ Կալդիա խաղաղեցաւ եւ Վանտէ նորէն ազատ չնչեց, Սէն-Ռէմի գիւղին երեցը մեր պատմած պատմութիւնն իմանալով Պիկուանի մոռացեալ գերեզմանը փնտռեց գտաւ եւ խաչ մը կանգնեց հետեւեալ արձանագրութեամբ:

ՅԱՂԹԵՍՅԵՍ ՍՈՅՆ ՆՇԱՆԱԻ՝ ԱՇԽԱՐՀԻ

ԵՒ ՆՈՅՆ ԻՆՔՆ ՔԵՁ:

ԹԱՐԳՄԱՆԵՑ Գ. Ֆ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրական մի եղելութիւն: —

Անցեալ ամսոյ մէջ մի Եւրոպացի ճանրորդ անցնելով Սէն Ռէմօ էն երեկոյին կ'իջնէ քաղաքին պանդոկների մին գիշերելու համար. երեկոյին ճաշարանէն ելլելով կը մտնէ սենեակը, կէս գիշերուան մօտ ճամբորդը մի աղմուկ լսելով կը ցատկէ անկողնէն եւ ճրագը կը վառէ. ինչ տեսնէ լաւ, երկու հոգի եւ մի դագաղ սենեկին մէջ տեղ, ճամբորդը կը զարմանայ եւ անտարբեր կեցած կը նայի անկող հիւրերուն. վայրկեանական լուսթննէ վերջ դառնալով նորեկներին կ'ըսէ, — կը խնդրեմ, ագնիւ Պարոններ ես զեւ մեռնելու փափաքը չունիմ, հեռացէք ասկից եւ ազատ թողէք զիս: Անձանօթները կը սրտառխանեն. — մենք եկած չենք զձեզ տանելու դուք հանդիստ եղիք, այս ըսելով նոյն սենեկին անկիւնը գտնուած մի պահարանէ կը հանեն մի դիակ եւ դնելով դագաղին մէջ կը հեռանան:

Ճամբորդը դարձեալ կը մտնէ իւր անկողինը. բայց մինչեւ առաւօտ չէ կարող քնանալ. հետեւեալ օրը հետաքրքիր լինելով կը դիմէ պանդոկապետին եւ կիմանայ անկից թէ մի օր առաջ նոյն սենեկի մէջ յանկարծակի մեռած է ճամբորդ մը, պանդոկապետը կը պահէ զայն պահարանի մէջ որ գիշերը դան մեռելաթաղք տանին եւ նոյն գիշերը պանդոկի այդ սենեակը պարապ չի մնալու համար պանդոկապետը կը վարձէ այդ ճամբորդի գիշերելու համար:

Կ. Պօլսոյ Պուլկարական գործակատար հանգուցեալ Տօգթ. Կէօրիկի Վուլքովիչի տեղ պաշտօնի կոչուած է Պէլկրատի Պուլկարական գործակատար Պ. Բ. Տիմիթրօֆ:

Ներկայ 1892 տարւոյ Սեպտեմբերի 1ին պիտի բացուի 'ի Ֆիլիպէ Երկրագործական ցուցահանդէս մը եւ պիտի տեւէ ամբողջ մի ամիս, արդէն Պուլկարիոյ գլխաւոր քաղաքաց Պուլկար եւ Թուրք ժողովուրդը սկսած են այլ եւ այլ առարկայներ յղել ցուցահանդէսի տնօրինութեան եւ իգական սեռէ ալ ամբողջ Պուլկարիոյ մէջ կազմուան գործադիր ժողովներ որոնք պիտի ներկայացնեն ընտիր ձեռագործներ 'ի ցոյց տրուելու համար: Եւրոպացիք ոչ նուազ հետաքրքիր են տեսնելու սոյն առաջին Պուլկարական ազդային ցուցահանդէսը:

Պուլկարիոյ մեր Հայ գաղթականութեան ուշադրութիւնը կը հրաւիրուի այս մասին:

ԱՅԼԵԻԱՅԼԻՔ

Անցեալ 1891 տարւոյ ընթացքում Ռուսաստանէ Ամերիկա եւ Պաղեստին գաղթած են 13,000 հրէայ. գաղթականք Քիէվի նահանգի այլ եւ այլ քաղաքներէն են:

Նոր քաղաք մը սահմաններ է Ալթէնպուրիի (Գերմանիա) ոստիկանութեան տեսուչն. եւ հրատարակել է 'ի գիտութիւն ժողովրդեան: Տուգանաց պիտի դատապար-

տուր ա՛յն անձն որոյ մուրացիկներու եւ դատարկաշրջիկ-
ներու ողորմութիւն տալը կը տեսնուի:


Պրանտէպուրի ընկերվարականք ընկերութիւն մը
կազմեր են, Գերմանիոյ թշուառացեալ գործաւորներն ՚ի
Հարաւային Ամերիկա փոխադրելու, եւ ՚ի հարաւակողմն
Պրազիլիոյ Գերմանական գաղթականութիւն կազմելու
նպատակաւ:

Մէջեւ Նահանգաց Բնակչաց Բէ-ը քիչ յամանակի մէջ
զարմանալի արագութեամբ տուարացած է: Դաշնակցու-
թեան հաստատութեան ատեն երկրին բնակչաց թիւն 3
միլիոն էր. այժմ 60 միլիոն 500 հազար է: Զիքակօ քա-
ղաքը 1830ին հաստատուելու ատեն 30 հոգի բնակիչ ու-
նէր իսկ այժմ 260 հազար է: 27 տարուոյ մէջ Միացեալ
Նահանգաց բնակչաց թիւը կրկնապատկեալ է:

Բիպրազ երեւելի վիրաբոյժն երեկոյ մը դրան մօտ սի-
րուն շուն մը տեսնելով ոտն կոտրած, ներս առաւ, եւ
բուժեց կենդանւոյն ոտն. զարմանին ատեն եւ այնուհն-
տեւ ալ, շունն ամենամեծ երախտագիտութիւն կը յայտ-
նէր վիրաբուժին, որ կարծեց թէ յաւիտեան ազատարա-
րէն չը պիտի բաժնուէր: Այլ շունն ուրիշ տէր մ'ունէր,
եւ գիտենք որ այս կենդանեաց համար առաջին սէրն յա-
ւիտեան կը տեւէ եւ առաջին տէրն նոյա մշտնջենաւոր
տէրն է: Արդ, երբ վազելու կարող եղաւ, գնաց եւ ալ
չը վերադարձաւ:

Վիրաբոյժն իր բարեսրտութեան համար գրեթէ զզջա-
լով կ'ըսէր թէ, յսուած բան էր շան ապերախտութիւնն:
Հինգ վեց ամիս անցած էր, երբ օր մը Պ. Բիպրազ վե-
րստին իր դրան առջեւ կը տեսնէ նոյն շունն որ չէր յա-
զենար իր ազատարարն եռանդագին զգուելէ: Վիրաբոյժն
ուրախացաւ եւ ուզեց ներս առնել շունն, այլ կենդանին
փոփոխակի կը լզէր նորա ձեռն եւ կը քաշէր քղանցքն
որպէս թէ բան մը յոյց տալու համար: Ինչ տեսնէ բժիշկն
ազէկ, կենդանին իր ծանօթներէն քած մը բերած էր բա-
րերարին, որպէս զի նորա կոտրած ոտն ալ բժշկէ:

Ե. Տէֆերճեպուշեանի հարեփրէն +աղբ-առ:



ՃՈՂՈՎԱԳՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

“ԴԱՆՈՒԲ, ԼՐԱԳՐՈՅ

Դ ԲՈՒՍՃՈՒԳ [ՊՈՒԼԿԱՐԻԱ]

Պատիւ ունիմ՝ ծանուցանել արգոյ հասա-
րակութեան թէ՛ տպարանիս մէջ կը տպագ-
րուին Հայերէն, Պուլկարերէն եւ Ֆռանսերէն
ընդունելով ամեն տեսակ գործեր, ինչպէս են,
վաճառականական տնտրականեր, չրջարեական,
առևտրական ցուցակներ, այցեատմաներ, ընկա-
լագրեր, հարսանեաց հրաւիրագրեր, մահա-
գոյժի ազգեր են են. յաճախորդք կը հրա-
ւիրւին գիմկ խմբագրութեանս հասցէին:

ՆՈՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՐՆ

ՆՈՐ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Կ. Մ. ՀԱՃԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Նստիկին աշակերտ Պերպերեան
վարժարանի ՚ի Պոլիս

ԲՈՒՍՃՈՒԳ

ՏՊԱՐ. Մ. Ս. ԹԻԼԹԻԼՆՃԻՅԻ

Ազգ. վարժարանաց համար պիտանի մի գրքոյկ է. կը
յանձնարարեմք մեր ամեն տեղի Պատ. Դաստիարակաց
որ նախակրթարանի աշակերտաց զաղարար մը տալու
համար բնագիտութեան վրայ, քաջալերեն մեծարոյ նկղի-
նակին սոյն փոքրիկ գործն:

Կը վաճառի հեղինակին մօտ. գին 1 ֆր:

Փափաքողք պարտին դիմել հետեւեալ հասցէին՝

Mr. G. Hadji Stepanian

(BULGARIE)

CHOUMLA

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ» խմբագ-
րատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոս-
տի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ԲԱՅՅԻ, ԽԵՆԹԸ (Արկածներ վերջին Ռուս-Թուր-
քական պատերազմից) եւ ԶԱՄԱՅԻՒԳԻՆ, (Մի պատ-
կեր նրա արշաւանքից). Երկուքը մէկտեղ մէկ հատորի
մէջ ամփոփուած. Բ. Տիպ: 8 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅԼԵՆԻ ԿՏԱԼԸ 5 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ՄԻԼԸ ԱՅՍՊԻՍ, ՄԻԻՍԸ ԱՅԼԳԵՍ
Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից,
4 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅՏԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻՒ Պատկերը խոշորադիրք. 2 ֆր:

» » աւելի փոքր. 1 ֆր.

ՏԵՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԼԹԻԼՆՃԻՅԻ

ԲՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻԼԹԻԼՆՃԻՅԻ

Скоростная печать на Спиро Гулабчье